ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

ԹԻՎ 66

«12» Դեկտեմբերի2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

*Հարգարժան պարոն Ղահրամանյան*

***Ձեզ ենք ներկայացնում Արմավիր մարզի Արևադաշտ գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 2 նիստի որոշումը:***

*Առդիր 6 թերթ:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Հ. ՕՀԱՆՅԱՆ*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 15912-12
«19» 12 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«10»դեկտեմբերի 2012թ N 1

*ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով.

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 2 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. Խաչատյան Էդիկ
2. Աբասյան Թեմուր
3. Մողրովյան Մանիկ
4. Սեդրակյան Սեդրակ
5. Վարդանյան Վրույր

Համայնքի ղեկավար Հ. Օհանյան

Կ.Տ.

2012թ «10» դեկտեմբերի թիվ 2 նիստ

գ. Արևադաշտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«10» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012թ. N 2-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ մասով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ գյուղական համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վարների 2013 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվա հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. Էդգար Խառատյան ----------
2. Վրույր Վարդանյան ----------
3. Թեմուր Աբասյան ----------
4. Մանիկ Մողրովյան ----------
5. Մեղրակ Մեղրակյան ----------

Համայնքի ղեկավար՝ Հ. Օհանյան

2012 թվականի Դեկտեմբերի «10»ի
թիվ 2 նիստ
Գ. Արևադաշտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՂԱՇՏ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 2[illegible] ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՂԱՇՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

**1.** Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության ( տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև երեք հարյուր քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև երկու հարյուր քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար հինգ հազար դրամ:

2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. երկու հարյուր մեկից մինչև հինգ հարյուր քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տասնհինգ հազար դրամ.

բ. հինգ հարյուր մեկից մինչև հազար քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար քսանհինգ հազար դրամ.

գ. հազար մեկ և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երեսուն հազար դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3)մինչև քսան քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հազար հինգ հարյուր դրամ.

4) քսան և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ:

**2.** Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն հազար դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, սենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն ապա. բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման առաջին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր

շինարարության համար «Տեղական տուրք և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերով՝ օբյեկտիվ ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում է նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նոր նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել երկու հազար դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1) ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար երեք հազար դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ երեք հազար դրամ.

5.Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար երեք հարյուր հիսուն դրամ.

2) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել մեկ հարյուր հիսուն հազար դրամ:

3) Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներով պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հիսուն հազար դրամ:

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր հազար դրամ

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ թույլտվության համար մեկ քառակուսի մետրի համար տեղական տուրք սահմանել՝

1)ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև քսան ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը քսան և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար երկու հազար հինգ հարյուր դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ հինգ հարյուր դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել մեկ հազար դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հինգ հազար դրամ:

10. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց սահմանել փոխհատուցման վճար:

11. Գյուղապետարանի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց սահմանել փոխհատուցման վճար մեկ հազար դրամ:

12. Գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար հինգ հազար դրամ: